ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
HISTORY MUSEUM OF ARMENIA
NON - COMMERCIAL STATE ORGANIZATION

N 06-261

«12» հունվարի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան,

Ի պատասխան Ձեր 03.08.2021թ. թիվ 2470-212 գրության՝ կից ներկայացնում ենք Հայկուհի Մանվելի Մուրադյանի՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար հայցվող ատենախոսության վերաբերյալ կարծիք:

Առդիր 5 /հինգ/ էջ:

Հարգանքով՝ Դավիթ Պողոսյան

կատ.՝ Մանե Խառատյան
Հեռ.՝ 011 547363

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության Հրապարակ 4
Republic Square 4, Yerevan 0010, RA
+374 (10) 58 27 61, 56 53 22
museum@historymuseum.am

Сканировано с CamScanner

Կարծիք

Հայկուհի Մանվելի Մուրադյանի

«Մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորումը Հայաստանում. Խորհրդային ավանդույթը, ազգային ռեսուրսները և եվրոպական հեռանկարները (20-րդ դարի վերջ և 21-րդ դարի սկիզբ)»

Թ. 00.06 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության՝ կազմված Հայաստանի պատմության թանգարանի Նոր և նորագույն բաժնի 2021 թ. օգոստոսի 10-ի ընդլայնված նիստի քննարկման արդյունքում

Ատենախոսությունը՝ նվիրված Հայաստանում մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորմանը, չափազանց արդիական թեմա է: Այն քննում է դեռևս խորհրդային շրջանում ձևավորված ավանդույթները, որոնք շարունակում են կենդանի մնալ նաև 1991 թ. Հայաստանի անկախացումից հետո: Կարևոր խնդիր է նաև ազգային ռեսուրսների պահպանման և զարգացման հարցը՝ գլոբալիզացիոն գործընթացների, զանգվածային մշակույթի և մշակույթի տնտեսականացման պայմաններում: Ատենախոսության մեջ անդրադարձ է արվում այնպիսի մի կարևոր հիմնախնդրի, ինչպիսին եվրոպական քաղաքակրթական արժեհամակարգին ինտեգրվելու նպատակով արևմտյան պրակտիկաների կիրառման և դրանց տեղայնացման փորձերն են՝ հետխորհրդային Հայաստանում ի հայտ եկած սոցիալ-տնտեսական տրանսֆորմացիաների պայմաններում: Հեղինակը, հիմնվելով ժամանակակից տեսությունների և արդի մշակութաբանական մեթոդաբանության վրա, որին փայլուն տիրապետում է, կարողացել է տրամաբանական կապ ստեղծել խորհրդային և հետխորհրդային շրջանների միջև՝ ցույց տալով առաջինի ազդեցությունը Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման գործում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (ընդհանուր՝ ութ ենթագլխով), եզրակացություններից, գրականության ցանկից, հավելվածից:

Ներածության մեջ հեղինակը ներկայացնում է աշխատանքի արդիականությունը, նպատակը, մեթոդաբանությունը, համառոտ բնութագրում թեմային առնչվող հիմնախնդիրները, վերլուծում օգտագործած գրականությունը՝ հատկապես այդ ոլորտի

Сканировано с CamScanner

տեսաբանների տարբեր մոտեցումները և տալիս տեսական հենքը՝ մշակութային քաղաքականության սահմանումները, եզրույթները, որոնց հիման վրա կուտ ձևով կառուցված է բուն աշխատանքը:

Առաջին գլխում՝ վերնագրված «Մշակութային քաղաքականությունը Խորհրդային Հայաստանում. ձևավորումը և կայացման ընթացքը» հեղինակն անդրադառնում է խորհրդային ժամանակաշրջանի մշակութային քաղաքականության փուլային զարգացմանը՝ կոմունիստական գաղափարախոսության և ԽՍՀՄ ազգային քաղաքականության համատեքստում: 1.1 ենթագլխում նա տալիս է ԽՍՀՄ մշակութային քաղաքականության բնորոշ առանձնահատկությունները և զարգացման փուլերը՝ կապելով դրանք խորհրդային ղեկավարների իշխանության ժամանակաշրջանի հետ (Ստալին, Խրուշչով, Բրեժնև, Գորբաչով): Հեղինակի նման մոտեցումն իրավացիորեն ընդգծում է ԽՍՀՄ-ում ղեկավար անձի դերակատարությունը՝ մշակութային քաղաքականության տարբեր մոտեցումների կիրառման հարցում, որը, հաճախ կախված էր իրենց անձնական նախապատվություններից: 1.2 ենթագլխում ատենախոսը մանրամասն վերլուծում է 1920-30-ական թթ խորհրդային մշակութային քաղաքականությունը՝ հստակ վերհանելով այդ բնագավառում երկակի ստանդարտների կիրառումը՝ ինտերնացիոնալիզմ և ազգայնականություն, որը գոյատևեց խորհրդային ողջ ժամանակաշրջանում: Ատենախոսը, հենվելով Վ. Պապերնիի առաջ քաշած տեսության վրա, 1920-30-ական թթ. մշակույթը բաժանել է «Մշակույթ 1» և «Մշակույթ 2» հատվածների: Նա, սեփական լրացումներով և գիտական ճկուն վերլուծությամբ կիրառելով այս մոդելը, տալիս է խորհրդահայ շրջանի մշակութային տարբեր դրսևորումների բնութագիրը՝ մշակույթի գաղափարականացում, ոլորտի կառավարման օրենսդիր և ինստիտուցիոնալ դաշտի ստեղծում, անգրագիտության վերացում, խորհրդահայ մտավորականության ձևավորում, մշակույթը որպես քարոզչության գործիք և այլն: 1.3 ենթագլխում Հ. Մուրադյանն, արխիվային նյութը համադրելով սեփական խորը վերլուծությունների հետ, ներկայացնում է մշակութային այն էական փոփոխությունները, որոնք տեղի ունեցան Ստալինի մահվանից հետո՝ այսպես կոչված խրուշչովյան «ձնհալի տարիներին»: Այդ փուլը, որպես կանոն, բնորոշվում է մշակույթում որոշակի ազատությունների հանդես գալով, սակայն հեղինակը, հավասարակշռում է այդ ժամանակաշրջանի իրողությունը՝ դիպուկ ձևով նկատելով, որ գաղափարախոսական

Сканировано с CamScanner

վերահսկողությունը հատկապես արվեստի և գիտության գործիչների նկատմամբ, շարունակեց գոյատևել, փոխելով միայն ձևերը:

Երկրորդ գլխում՝ վերնագրված «ՀՀ մշակութային քաղաքականության նոր հայեցակարգի ձևավորումը» ատենախոսը անդրադառնում է Հայաստանի անկախացումից հետո ձևավորված մշակութային քաղաքականության հայեցակարգային հիմնախնդիրներին, մշակութային քաղաքականությունն իրականացնող նոր ինստիտուտներին՝ մանրամասն քննելով մշակույթը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտը (2.1 ենթագլուխ): Հեղինակն անդրադառնում է այնպիսի մի արդիական հարցի, ինչպիսին մշակույթի տնտեսականացումն է, որի առաջին փորձերը տեղի ունեցան անկախացումից հետո (2.2 ենթագլուխ): Հատկապես արժեքավոր ուսումնասիրություն է 2.3 ենթագլուխը, որտեղ ատենախոսը ներկայացնում է ՀՀ մշակութային քաղաքականությունը երեք նախագահների (Լ. Տեր-Պետրոսյան, Ռ. Քոչարյան, Ս. Սարգսյան) անձնական հատկանիշների, նրանց նախասիրությունների վերլուծության համատեքստում: Նա գիտական փայլուն վերլուծության հիման վրա ցույց է տալիս, թե Հայաստանի նման երկրում, որտեղ ուղղահայաց կառավարումը առանձնակի ուժեղ է դրսևորված, որքան մեծ է լիդերի դերը երկրի մշակութային քաղաքականության, քաղաքական վերնախավի և մտավորականության փոխհարաբերությունների ձևավորման գործում: Այս երևույթը նույնպես կարելի է համարել խորհրդային ժամանակաշրջանից ժառանգած ավանդույթ, երբ ինստիտուտների գործունեությունը փոխարինվում է բացառապես «վերևից» եկող հրահանգներով:

Երրորդ գլուխը՝ վերնագրված «Մշակութային քաղաքականության հիմնական ինստիտուտները Հայաստանի խորհրդային և անկախության տարիներին. ժառանգականությունը, իմաստային և գործառութային փոխակերպումները (գյուղական ակումբների, մշակույթի տների և ստեղծագործական միությունների օրինակով)», ներկայացնում է մշակութային քաղաքականության այն արմատները, որոնք գալիս են դեռևս խորհրդային ժամանակաշրջանից: Առաջին անգամ է, որ մշակութաբանորեն ուսումնասիրվում է խորհրդային շրջանի այնպիսի կարևոր ինստիտուտ, ինչպիսիք մշակույթի տներն էին: Դրանք, գաղափարախոսական գործառույթ ունենալուց բացի, հանդիսանում էին մշակույթ սերմանող, կրթող կարևոր օջախներ: Ինչպես արդարացիորեն նկատում է հեղինակը, դրանց անհրաժեշտությունը վերացավ՝ պայմանավորված ոչ միայն նոր սոցիալ-հասարակական հարաբերությունների ձևավորմամբ, այլև տեղեկատվական

Сканировано с CamScanner

նոր, ավելի լայն դաշտի ի հայտ գալով (համացանց, սոց. կայքեր): 3.2 ենթագլխում ատենախոսը անդրադառնում է ստեղծագործական միություններին, որոնք ծնունդ առան ստալինյան շրջանում՝ դառնալով խորհրդային քաղաքականության և կոմունիստական գաղափարախոսության քարոզչական մարմիններ: Սակայն դրա կողքին, խորհրդային շրջանում ստեղծագործական միությունների տված արտոնությունները լավ մոտիվացիա էին ստեղծագործելու: Դրանք պայմաններ էին ստեղծում հրատարակվելու, ցուցահանդեսներին մասնակցելու, համերգներ տալու՝ պետության հովանավորությամբ և միջոցներով: Հեղինակը լուրջ ուսումնասիրություն է կատարել՝ արժեքավոր բացահայտումներ անելով մշակույթի տների և ստեղծագործական միությունների անկման պատճառների մասին հետխորհրդային շրջանում, որն այս աշխատանքի առավել կիրառական մասն է կազմում:

Աշխատանքն արժևորվում է ներկայացված հավելվածի շնորհիվ, որը հիմնված է հեղինակի կողմից հավաքած դաշտային նյութի վրա և լրացուցիչ կռվան է նրա կատարած հսկայական աշխատանքի:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած ծավալուն և արդյունավետ ուսումնասիրություն հանդիսացող աշխատանքը՝ կցանկանայինք անել մի քանի դիտարկումներ.

1. Ցանկալի կլիներ, որ առաջին գլխի ենթավերնագրերը ավելի որոշակի արտահայտեին փուլային բաժանումները: Օրինակ. 1.2 ենթագլուխը վերաբերում է 1920-30-ական թթ., որից հետո 1.3-ը՝ 1950-60-ական թթ.: Կարելի էր 1.2 ենթագլխում ընդգրկել նաև 1940-ական թվականները, իսկ 1.3 ենթագլխում ավելի խորն անդրադառնալ բրեժնևյան լճացման տարիներին:
2. Շատ արժեքավոր կլիներ առանձին ուսումնասիրել գորբաչովյան ժամանակաշրջանը՝ համեմատելով 1980-ականների ազատությունները 1960-ականների հետ՝ ցույց տալով վերակառուցման տարիների հրապարակայնության «ամենաթողությունը», որը շատերը համարում են ԽՍՀՄ-ի փլուզման պատճառներից մեկը, երբ փշրվեցին խորհրդային արժեքները՝ ճանապարհ բացելով նաև ողջ սոցիալիստական ճամբարի փլուզման համար:
3. էջ 30-ում գրված է. «Զևով ազգային, բովանդակությամբ պրոլետարական (ավելի ուշ փոխարինվեց «խորհրդային» եզրով): Պետք է լինի բովանդակությամբ սոցիալիստական, որը, կարծում ենք, հեղինակի կողմից պարզապես վրիպակ է:

Сканировано с CamScanner

4. Ատենախոսը խորհրդային գործիչ Ալ. Մյասնիկյանի գործունեությանն անդրադառնում է միայն երրորդ գլխում, այն էլ տողատակում (էջ 131, հդ. 334): Կարծում ենք, Ալ. Մյասնիկյանի գործունեությունն այնքան զգալի է, որ կարելի էր ներկայացնել 1.2 ենթագլխում՝ 1920-30-ական թթ մշակութային քաղաքականությունը ներկայացնող հատվածում:
5. Կարելի էր առանձին ենթագլխով ներկայացնել ատենախոսության վերնագրում մեջբերվող եվրոպական հեռանկարները՝ ընթերցողին առավել ընկալելի դարձնելու համար, թե որոնք են դրանք:
6. Ցանկալի կլիներ նաև մեկ ենթավերնագրի շրջանակներում հատուկ նախանշել այն հեռանկարային ուղղությունները կամ գործընթացները, որոնք կանխատեսելի են ՀՀ մշակութային քաղաքականության զարգացման համատեքստում:

Նշված դիտողություններն ամենևին չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը և ունեն զուտ խորհրդատվական նշանակություն: Նկատի ունենալով աշխատանքի արդիականությունը՝ ցանկալի կլինի այն տեսնել հրատարակված՝ հնարավորինս կարճ ժամանակահատվածում:

Սեղմագիրը լիովին արտահայտում է ատենախոսական աշխատանքի հիմնական բովանդակությունը, առանձին գլուխներում տեղ գտած կարևոր դրույթները:

Գտնում ենք, որ Հայկուհի Մանվելի Մուրադյանի «Մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորումը Հայաստանում. Խորհրդային ավանդույթը, ազգային ռեսուրսները և եվրոպական հեռանկարները (20-րդ դարի վերջ և 21-րդ դարի սկիզբ)» ատենախոսական աշխատանքը միանգամայն համապատասխանում է Թ. 00.06 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար գործող պահանջներին, և նա արժանի է իր հայցած գիտական աստիճանի շնորհմանը:

Նոր և նորագույն պատմության բաժնի վարիչ՝ Ս. Կ. Գալստյան

Ս. Գալստյան ստորագրությունը հաստատում եմ՝
Հայաստանի պատմության թանգարանի
գիտական գծով փոխտնօրեն՝ Ն. Ա. Երանյան

Сканировано с CamScanner